

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍՍԱՆՍԱՆ

Երկու քիւր մէկ ծարով

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյար

Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆՈՒԿ

Կանոնադրում ստոր
20 սանթիմ



ԺԱՆՈՒՄ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱՐԱՔ

Redaction journal

Ir vounk

VARNA (Bulgaria)

Редация

на ВѢСТНИКЪ

ИРАВУНИ

ВАРНА

Կրտսերները ևս չեն տրոհիր

ՅԱԿՈԲ Կ. ՀՃԻ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կը վաճառէ Սօֆիա քաղաքի
վիճակահանութեան տոմսերը .

Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1.50

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Ռուս կայսրութեան մէջ տի-
րող չփութ ու յուզումնալից կա-
ցութենէն աւելի, այսօր բոլոր
աշխարհի ուշադրութիւնը դար-
ձած է Ալեքսանդրի դեսպանա-
խորհուրդին, ուր Մարքի բա-
րենորդմանց խնդիրը կարգա-
դրելու քօղին տակ գերմանա-ֆը-
րանսական հին ոխին ու հակա-
ռակութեան հաշուարկարու-
թիւնը կատարել կը փորձէ գեր-
մանական դիւանագիտութիւնը,
ինչպէս որ կանխատեսուած էր
առաջին օրէն թէ դեսպանախոր-
հուրդին առջեւ ներկայանալիք
գլխաւոր դժուարութիւնը ոստի-
կանութեան կազմակերպութեան
խնդիրը պիտի ըլլար, այսօր ի-
րականացած է այդ և այնչափ
վտանգալից հանգամանք ստա-
ցած է որ ժամէ ժամ կը սպաս-
ւի Ֆրանսայի և Գերմանիոյ մի-
ջեւ յարաբերութեանց խզումին
հակառակ ֆրանսացի պատու-
ւիրակներուն ցոյց տուած ճկու-
նութեան ու սպասուածէն աւելի
համակերպումներուն, Գերմանա-
ցիք յամառ պահանջկոտութեամբ
մը, կը պնդեն իրենց առաջար-
կին վրայ, և ներկայացուած ա-
մեն հակառակարկ ու բարեփո-
խում կը մերժեն, ոչ թէ փաստե-
րով կամ տրամաբանօրէն, այլ
պարզապէս կոշտ մերժումով մը,
աւանդելի է խօսքով, Գերմա-
նացիք կը յամառին ոչ մէկ ա-
ռաւելութիւն չը ճանչնալու ի
նպաստ Մարքի սահմանակից ե-
ղող Ֆրանսացուց, մինչեւ դես-
պանախորհուրդին մասնակցող
ուրիշ պետութեանց պատուիրակ-
ներ Ֆրանսայի առաջարկը բա-
նաւոր կը նկատեն և տրամա-

դիր կը թուին ընդունելու որ
Մարքի ոստիկանութիւնը ֆրան-
սացի ու սպանիացի սպաններու
միջոցաւ կազմակերպուի, Անգ-
լիական մամուլին մէկ կարեւոր
մասը Գերմանիոյ յամառ և կոշտ
վարմունքին դէմ սկսած է խիստ
լեզու գործածել և ըսել պարզա-
պէս թէ անգլիացի ազգը չպիտի
թողու որ իր բարեկամ ու դրացի
Ֆրանսան Գերմանացիներէն խոշ-
տանքուի: Ամերիկեան, սպանիա-
կան եւ ուրիշ եւրոպական թեր-
թերն ևս կը դատապարտեն Գեր-
մանիոյ անիրաւախօս վարմուն-
քը և կը յայտարարեն թէ պէտք
չէ ձգել որ գերմանա-ֆրանսական
ահռելի պատերազմով մը աշ-
խարհի խաղաղութիւնը վրդովուի
և տնտեսական համաշխարհային
տագնապ մը տիրապետէ վտան-
գելով պետութեանց շահերը ու
ընդհանուր վաճառականութիւնը:
Ալեքսանդրի բանակցութեանց
ներկայ անյաջողութեան հանգէպ
սկսած է սա կարծիքը տարածո-
ւիլ թէ Ամերիկայի Հանրապե-
տութեան նախագահ Մ. Ռոզվելթ
և Աւստրիոյ Ֆրանց Եօզէֆ կայս-
րը անձնապէս միջամտին ու խա-
ղադարարի գեր ստանձնէին, Բայց
խնդիր է գիտնալ թէ ինքնապա-
տան ու գոռոզ Վիլհելմը պիտի
ուզէ զիջումներ ընել, երբ Ֆը-
րանսացիք կը յայտարարեն թէ
իրենք պէտքէն աւելի զիջած են
և այլ ևս ոչինչ չեն կարող զեղ-
չել:

ՎԱՌՆԱՅԻ ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

—*—

ՀԱՆԴԵՍ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍ ԵՒ ՄԻԹԻՆԿ

Տեղւոյս հայ գաղթականու-
թիւնը այս տարուան Բարեկեն-
դանի ամբողջ շաբաթը ազգային
խանդավառութիւններով անցուց
Ահա անոր համառօտ պատկերը:
Ա.—Չորեքշաբթի գիշեր խումբ
մը պատանիներու կողմէ թատե-
րական ներկայացում մը տրուե-

ցաւ «Սաէտինէնի» սրահին մէջ,
ի նպաստ Խարբերդի երկրաշար-
ժի արկածեալներուն:

Բ.—Հինգշաբթի առաւօտ եկե-
ղեցւոյ մէջ պատարագի արարու-
ղութենէն յետոյ շատ վայելուչ
կերպով կատարուեցաւ վարդա-
նանց հանգէսը ազգ. երկսեռ
վարժարաններու պաշտօնէու-
թեան և աշակերտներու ու ա-
շակերտուհիներու կողմէ խումբ
բաղում թեան մը ներկայութեան:

Գ.—Հինգշաբթի գիշեր կարգ
մը երիտասարդներու նախա-
ձեռնութեամբ «Պուլկարիա» սրա-
հին մէջ ներկայացուեցաւ
ՄԵՆՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
թատերգութիւնը ի նպաստ Ամե-
րիկայի մէջ հայ դատի բարեկան-
տը ստանձնող Պոսթոն հրատա-
րակուած Արմէնիա ամսագրի
խմբագրութեան: Այս երեկոյթը
ծանուցումէն շատ աւելի ճոխ
և սպասուածէն շատ գոհացուցիչ
եղաւ ու հանդիսականները մե-
ծաւ գոհունակութեամբ և լաւ
տպաւորութեան տակ մեկնեցան:

Դ.—Ուրբաթ գիշեր Զինուո-
րական Բիւլային մէջ տեղի ունե-
ցաւ ի նպաստ ազգ. երկսեռ վար-
ժարաններու տարեկան պարա-
հանգէսը ազգային արժանա-
պատուութեան պատուաբեր եղա-
նակաւ և արդիւնաւոր կերպով,
շնորհիւ քաղաքիս առաջնակարգ
հայ վաճառական դասուն պատ-
կանող կարգ մը երիտասարդներու
ջանքերուն և անոնց նիւթական
զոհողութիւններուն: Կարժէ քիչ
մը մանրամասնել:

Հայ վաճառականներէ յանձ-
նախումբ մը ստանձնած էր օտար
չըջանակաց մէջ վաճառումը տու-
սերուն, որ երկու կարգի կը
բաժնուէր, «ըստ կամ» և «10 ֆր.»
գնով: Այդ յանձնախումբին շը-
նորհիւ տուներու վաճառումը
յաջող անցած էր: Պարասրահին
մէջ հանդիսականներու բազմու-
թիւնը թէև մեծ թիւ մը չէր
կազմեր, բայց մեր հայ լայնփի
մէկ կարեւոր մասը հանդիսա-
վայրը կը շքեղադարձէր, մաս-
նակցութեամբ պուլկարի հրեայ
և յոյն ընտրեալ դասուն պատկա-

նող մաս մը հիւրերու: Յանձ-
նախումբին անդամները սկիզբէն
գործին լաւ տրամադրուած ըլ-
լալով, պիտիէն ալ վարձած էին
ի նպաստ վարժարանին մատա-
կարարելու համար նոյն իսկ ի-
րենց ձեռքով և գլխաւորապէս
այս պարագան էր որ հանգէ-
սին մեծ ոգեւորութիւն տուաւ
և հասոյթի աղբիւրը բազմապատ-
կեց: մէկ շիջ շամբանեան մինչև
20—22 ֆր. և մէկ նարինջը 5—6
ֆր. աճուրդի հանելով, իսկ շատ
յատկանշական էր ծաղկեփուն-
ջերու աճուրդի պահուն մեր վա-
ճառական պարոններէն ոմանց
դրգուումը անպատճառ այդ կեր-
պով ալ կոկիկ գումար մը ազգ.
վարժարանին նպաստելու բաղ-
ձանքով, ահա անոնց ցանկը ա-
ճուրդին կարգով:

Մ. Մարքո Պառնաթեան 90 ֆր.
Տ. Արմենակ Տաւատեան 120 ֆր.
Տ. Կարապետ Դէսրգեան 240 ֆր.
Տ. Յակոբ Թօսպըլըգեան 100 ֆր.
Տ. Քէրովէ հիւլպէնկեան 90 ֆր.
Տ. Ասատուր Փափաղեան 95 ֆր.
Տ. Կարապետ Պէզաղեան 80 ֆր.
Դիմակաւորներու մէջ հագուս-
տի վայելչութիւնը աչքի կը զար-
նէր հայուհի մը որ Ա. պար-
գեւը ստացաւ և հրէուհի մը որ
Բ. պարգեւին արժանացաւ:

Կը կարծուի թէ 3000 ֆր. է ա-
ւելի զուտ հասոյթ գոյացած է,
որուն կէսը պահեստի պիտի մնայ
ազգային կալուածներ գնելու
ձեռնարկին ի նպաստ:

Մ Ի Թ Ի Ն Կ Ը

Ե.—Կիրակի առաւօտ, յետ աւարտ-
ման Ս. պատարագի, եկեղեցւոյ
շրջափակին մէջ միթիւնկ մը գու-
մարուեցաւ ժողովրդի բազմանքին
և հոգաբարձութեան հրաւերին
համաձայն, ի դիմաց հոգաբար-
ձութեան Միթիւնկը բացաւ Տ.
Գուրպէթեան և հաւաքումին
նպատակը ու կարեւորութիւնը
երկու խօսքով բացատրելով բեմ
հրաւիրեց Տ. Չարդարեան, Պատ.
Ամիրխանեանց և Տ. Քէլէեան.
որոնք իրենց կարգին օրուան
ազգային վիճակին վրայ խօսե-
լէ եւ տեսութիւններ պարզելէ յե-

տոյ, միթիւնին նպատակը իշա-
տազուլեցին, բացի վերջինէն,
և ժողովուրդի հաւանութեան են-
թարկեցին սա առաջարկը թէ
կը բազմայ իր կողմէ խնդրել
Ամերիկայի նախագահ Մ. Ռուզ-
վելթէն որ Հայկական Դատը ներ-
կայացնէ միջազգային դեռադա-
նախորհուրդի մը եւ անոր լու-
ծումը պահանջէ ներկայները մի-
աձայնութեամբ իրենց հաւանու-
թիւնը յայտնեցին և անմիջապէս
յանձնախումբ մը ընտրուեցաւ
հարկ եղածը պատրաստելու պաշ-
տօնով :

Սոյն Յանձնախումբը նոյն օրը
խորհրդակցելով ազգային պաշ-
տօնական մարմնոց հետ, որոշեց,
փոխանակ հեռագրի՝ որ շատ
համառօտ պէտք էր ըլլար բա-
ւական ընդարձակ ու բազմաստո-
րագիր հանրագրութիւն մը պա-
տըրաստել ու զրկել Ամերիկայի
Հայոց Ս. Առաջնորդին միջոցաւ
Մ. Ռուզվելթին :

Ահա այս է վառնայի հայոց
ներկայ տարւոյ Բարեկենդանի
հաշուեցուցակը, որ ազգային
կեանքի ծափահարելի եռուզեռ
մը կապացուցանէ և որ կարծեմ
շնորհաւորելի է :

Ա .

ՄԻԹԻՆԿ ՄԸ

ՖԻԼԻՊԷԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ ԿՈՂՄԷ

7 փետր. 1906

Տեղւոյ թաղ. Խորհրդոյ նախա-
ձեռնութեամբ կազմուած մասնախմբ-
ի մը միջոցաւ կազմակերպուեցաւ
միթիւն մը դիմելու համար Ամե-
րիկայի համակրելի նախագահ Պ.
Րուզվելթի, որպէսզի հայկական
դատը ներկայացնէ ու պաշտպանէ
յառաջիկայ գումարելի Լահէի դեմ :

ՍՈՒԼԹԱՆԸ ՄՊԱՆՆԵԼԱԻ ՓՈՐՁԻՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Արտատպուած «ԱՐԵՒԵԼԻ» էն)

[Ծար. նախորդ թիւէն]

ԸՆԴ. ԴԱՏԱԽԱՂԻՆ ԶԱՌԸ

Ինքը ասկէ տասը տարի առաջ «Հըն-
չակ» Հայ քօթիթէին անդամակցելով
մեծ ծառայութիւններ մատուցած է,
յիշեալ ընկերութեան գործերը կար-
գադրելով, նուիրահաւաքութիւններ
ընելով եւ անդամներ շտգնելով :
Նշանի այս ծառայութիւններուն բուն
քօթիթէն հիմնող անխնայարտ անձանց
գնահատութեան արժանացած են, որոնք
Նշանին Սվազէն Պօլիս վերադարձին
ի վաղձ անոր մատուցած ծառայու-
թիւններուն, իրեն յանձնած են այս
վկայականը՝ այսինքն կտաւի վրայ

պանախորհուրդին :

Միթիւնը տեղի ունեցաւ այս կիւ-
րակի առաւօտ 5 փետրուար, եկեղեց-
ւոյ շրջափակին մէջ, երկուսն ընտրու-
եալ բազմութեան մը ներկայու-
թեան :

Մասնախումբին անդամներն պա-
հետի հազարապետ Պ. Վարդապետ-
եան, մասնախումբին կողմանէ բացաւ
միթիւնը, շնորհակալութիւն յայտնեց
ներկայներուն, ու պարզեց այն օր-
ուան միթիւնին պատճառը : Նոյն-
պէս Պ. Պօսեան շնչեց օրուան
գումարու մին նշանակութիւնը, պառ-
տականութիւն նկատեց այս միթիւնը
ու ըսաւ, երբ նախաքայլը Եւրոպա-
ցի նշանաւոր անձնաւորութիւններու
կողմանէ կրկայ, մեր կողմանէ ու եւ
է անտարբերութիւն ոճրագործու-
թիւն պիտի նկատուի :

Յետոյ կազմուեցաւ զիւանք .
Մասնախումբին կողմանէ յատկապէս
հրաւիրուած էին ատենախօսելու
Պատ. Հայկ Եարտըմեան ու Պ. Պօս-
եան :

Ատենախօսներու յատկապէս տե-
ղին ճակատը դրուած էր, մեծակ
թուղթի մը վրայ խոշոր գրերով
գրուած «Մեծ նպատակը» որ մաս-
նաւորաբար պատրաստած էր պատ-
ուելի Հայկ Եարտըմեան :

Դիւանը հրաւիրեց պատ. Հայկ
Եարտըմեանը խօսելու :

Պատ. Հայկ Եարտըմեան պատմա-
կանօրէն բացատրեց հայուն դիրք քա-
ղաքակրթութեան մէջ, հայուն կամ-
քը ու հայ մարդը. անդադարձաւ ոյ-
ժին անհրաժեշտութեանը ու յեղա-
փոխութեան օգտակարութեանը վրայ .
հրաւիրեց ներկայները զէպի «Մեծ Նը-
պատակը» երեք անգամ գոչելով յեղա-
փոխութիւն, յեղափոխութիւն յեղա-
փոխութիւն :

Յարգելի ատենախօսը յուզուած
շնչերով նկարագրելէ յետոյ հայ
տառապանը, անցաւ օրուան միթիւ-
նին նշանակութեան, ներկայներու
նկատողութեան յանձնելով իրենց
պարտականութիւնները : Պատ. Եար-
տըմեան, իր ատենախօսութեան մի-
ջոցին երեք անգամ ընդհատուեցաւ
ծափահարութիւններով Եարտըմի Պատ-
ուելիին ատենախօսութիւնը մեծ տեղ
մը գրաւեց ներկայներու սրտին մէջ :
Յետոյ հրաւիրուեցաւ Պ. Պօսեանը :

Պ. Պօսեանը յոռետես գտնուե-

ցաւ ըլլալիք դիմումէն յառաջ գա-
լիք օգոթի մասին :

Հայէք անցեալ Քեպպանախորհուր-
դը անգարարական խաղ մը նկատ-
ուեցաւ, ու աւելցուց, ինչ կրնանք
սպասել այն տեսակ խաղաղասիրական
գեոստրատիգիայի մը, երբ անոր
գոյութիւնը տուող անիկայ առաջար-
կողը Չար մէ, որուն կառավարու-
թիւնը կովկասի մէջ կազմակերպեց
թաթարական վայրագութիւնները ու
աւելցուց, այն կառավարութիւնը որ
իւր հպատակ հայերը իւր հրամանով
կոտորել կուտայ, անշուշտ անտար-
բեր պիտի գտնուի Տաճկահայոց
պաշտպանութեան գործին, որմէ պի-
տ օգտուել Տաճիկ կառավարութիւ-
նը, որուն պիտի հետեւի բնականա-
բար Գեորգիան ու յետոյ Սևասթոպո-
լիսը այս ընթացքին մէջ, ան-
հետեւանք նկատեց եղած դիմումը,
ի բաց առեալ անակնկալ պարագայնե-
րէ :

Պ. Ատենախօսը ի վերջոյ համամիտ
գտնուելով միթիւնին, յուսախար
չրկալով համար, մեծ բան մը պէտք
չէ սպասել ըսաւ, ու հայրենիքի գա-
տին համար հերոսաբար մեռնողներու
հանգէպ յարգանքով մը վերջացուց :

Միթիւնին նախագահ Պ. Վարդա-
պետեան խօսք անսկիւր ըսաւ, երբ
ու եւ է կառավարութիւն իւր մղելիք
պատերազմը չապահովելու, երբ իրեն
բարեկամ մը չի շահի, երբէք չի ուզել
պատերազմի, առանց այս նկատողու-
թիւններու մղուած պատերազմը
ճակատագրական կը նկատուի : Մեր
այս դիմումը եթէ երբէք անմիջական
արդիւնք մը չունենայ, անշուշտ օր
մը իրենց ազդեցութիւնը պիտի ու-
նենան, մինք այս դիմումով սպա-
սանք հող պիտի պատրաստենք :

Պ. Ատենախօսը կարգաւ Յարգելի
Պ. Րուզվելթի զրկուելիք հեռագրին
պատճէլը, որ պիտի ստորագրուի զի-
ւանին կողմէ յանուն Ֆիլիպի երկ-
սեռ ազգաբնակչութեան թիւով 2000 :
Հեռագրական ծախքերուն համար
պնակ մը գրուեցաւ եկեղեցւոյ դուռը
որմէ գոյացաւ 230 ֆր :


Հեռագրի համար եղած ծախքը մօ-
տաւորապէս 400 ֆր. ի կը հասնի.
պակասը լրացնելու համար մասնա-
խումբը պզտիկ հանգանակութեան մը
սկսաւ :

Գովելի է թաղ. Խորհրդոյ նախա-
ձեռնութիւնը, ժողովրդական միթիւնի

կազմելուն համար :

Պարտք կը համարիմ շնորհակա-
լութիւն յայտնել կարգադրեց մասնա-
խումբին իր ջանքերուն համար :

ՀԱՅԵՐԸ ԵՒ Մ. ՌՈԶՎԵԼԹ



Սիւրիստրէէ մեզ կը տեղեկա-
ցնեն թէ Ս. Վարդանանց տօնին
առթիւ հինգշաբթի օր շատ սի-
րուն հանդէս մը կատարուած է .
և կաւելցնէ նամակագիրը :

Ամենէն վերջը բեմ բարձրացաւ մեր
հովիւր, — Արթ. Հայր Սարգիս Նարեկ-
եան որ օրուան, նշանակալից տօնին
վրայ գեղեցիկ տեսութիւն մը ընելէ
ետք ի Դիմաց քաղաքի Պատ. Թա-
ղականութեան, յորդորեց եւ հրաւի-
րեց ժողովուրդը, այդ նշանաւոր օրու-
ան մէջ, որ յիշենք նաեւ մեր ազգա-
յին ներկայ ճգնաժամը. եւ չը մոռ-
նանք որ, ուր տեղ ա'լ գտնուինք,
ու ինչ օտար երկնքի տակ այս ապրիլը,
ամենամեծ ու սուրբ պարտք մը կը
ժանրանայ մեր ամենուս վրայ : Սի-
րիւ մեր ջանքերով ազգին ու Հայ-
րենիքն. եւ ջանք չը խնայել մեր ազ-
գային գոյութեան անվերջ պահպան-
ման համար, հետեւապէս քանի որ ա-
ռիթը բարկապատէն է, ի Դիմաց Սի-
լիստրէի համայն հայութեան, հարկէ
երախտագրական հեռագիր մը ուղղել
Միացեալ-Նահանգաց վեհաձեռն նախա-
գահ Ռուզվելթին :

Ու այս սրտամօտիկ կոչը, անմիջա-
պէս հաւանութեան արձագանք գտաւ
բոլոր ժողովրդեան կողմէն, շուտով
Պատ. Թաղ. կողմէ անօրէնութիւն մը
եղաւ, վայրկեանի մէջ պէտք եղած
գումարը սիրայօժար վճարեց ժողովու-
րդը, ու Սիւրիստրէի ընդհանուր հայու-
թեան կողմէ հեռագրուեցաւ լուսաւոր-
եալ Ամերիկայի մարդասէր նախագա-
հին, խնդրելով որ, «մարդասիրական
իր թանկագին պաշտպանութիւնը, չը
զլանայ խաչուած Հայութեան ար-
դար դատին համար :»

Արդեօք որքան ցանկալի է որ, փոք-
րիկ Սիւրիստրէի պատ. Թաղականու-
թեան, եւ հայրենասէր ժողովրդեան
սոյն թելադրել օրինակին հետեւելու
բարի նախանշը ունենային Ռուսմանիոյ,

պէս գործադրէր, իր խռովարարա-
կան ջանքերը ապացուցանելու համար
այդ անիծեալ վկայագիրը ցուցնելով
վարձատրութիւն մը պիտի ապահո-
վէր. եւ անոր համար կտաւի վրայ
գրուած էր որ երկար ատեն անեղծ
մնայ ու չաւրուի : Նշան յայտարարեց
նաեւ թէ, ինք Պոլսոյ մէջ տեղի
ունեցած հայկական նախկին զէպ-
քին ալ մայրաքաղաք կը բնակէր
եւ տեղեկութիւն տուած էր կատա-
րուելիք յեղափոխական ձեռնարկնե-
րէն ու մտադրութիւններէն :

Երբ Սիւրիոյ Բիշիկ՝ այսինքն վահա-
նի հետ իր սենեցած յարաբերութեան
աստիճանը հարցուեցաւ, Նշան պա-
տասխանեց թէ, պսկէ ութ ամիս ա-
ռաջ երբ իրենց գործադրելիք ոճի-
րին եղանակին ու ձեւին վրայ վա-
հանի հետ կը խորհրդակցէին, մտա-
դրեցին Ղալաթիոյ Թիւնէլն ալ օդն
հանել ու Ռուսիոյ այս անիծապարտ նը-
պատակին գործադրութեանը համար,
վարձելու պատրուակաւ ձեռք ան-
ցուցին բանալին՝ Թիւնէլի կից գըտ-

լքած «Հնչակին» տեղ այս անգամ
կ'անդամակցի «Դրօշակին», որուն
անդամակցի կ'ընէ նաեւ իր հայրենա-
կիցը զոնապան Առաքելը : Նշան նը-
կատելով որ Հիւանդանոցը օգտ. պաշ-
տօնէութեան հետապնդումներէն եւ
հսկողութենէն զերծ է, հոն Առաքելի
հետ կը կարդայ «Դրօշակ» լրագիրը եւ
հետեւելով վերոյիշեալ անձանց թե-
լադութիւններուն. հրանիւթերն ու
պայթուցիկ պարկերները հիւանդանո-
ցին մէջ պահել տալու մտքը կը ըս-
կիւր ձեռնարկներ ընել զոնապան Ա-
ռաքելի մօտ, զոր արդէն յաջողած
էր անդամակցի ընել «Դրօշակի» :
Նշան խոստովանեցաւ թէ, ինք համո-
զեց զոնապան Առաքելի, որուն քո-
վէն գտնուած յիշեալ պայթուցիկ հրա-
նիւթերը իր միջնորդութեամբ Հիւան-
դանոց փոխադրուած ու պահուած են
երբ հարցուեցաւ թէ, նախագահու-
թեան վկայագիրը ինչու կտաւի վը-
րայ գրուած է : Նշան պատասխա-
նեց թէ երբ խռովարարական ձեռ-
նարկը գլուխ հանելով կատարելա-

Աւստրիոյ, Եգիպտոսի եւ Եւրոպայի Հայ Գաղութներու Ազգային մարմիններն ու ազգայինք, որով՝ դրապէս պիտի հաստատէին որ, իրօք, հայութեան անարատ արիւնը անոնց երակներու մէջ կոյս մնալով, հայն ո՛ր որ ալ գտնուի եւ ի՞նչ հանգամանքի մէջ ալ ապրի, կենդանութեան նշան ցոյց պիտի տայ :

ՎՏԱՐԱՆԻ

ՏՊՐԻՉ 11 փետ. 906

Նախագահ Ռօզվելթի ուղղուած հետադիւրսերուն ոյժ տալու համար, տեղւոյս Պատ. Թադ. Խորհրդոյ նախագահներու թիւը, ազգային վարժարանին մէջ հաւաքուած երկսեռ բազմութեան մը ներկայութեամբ բանախօսութիւններ կատարուելով, ներկայ երկսեռ բազմութեան բազմաթիւ հանգանակութիւն մը բացուեցաւ եւ գոյացաւ 12 ֆր. որով հոսկէ ալ հարկ եղած հետադիւրս պիտի դադարուի Ամերիկայի նախագահին :

Նոյնպէս տեղւոյս Թադ. Խորհուրդը մտադիր է նախկին մը շնորհակալութիւն յայտնելու Մ. Պէթթլօին :

Կը տեղեկանանք թէ Պուրէշի հայ գաղութը եւս հետադիւրս գիտումը բաժնէ նախագահ Ռօզվելթին :

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

26 յուն. 1906
Բէմսի վարի ԲԱԳԱՐԻՃ

Սրբիկ եղբայր.

Ամսոյս 11 ին գրած էի մի նամակ որուն մէջ արդէն գրած էի մեր գիւղին վիճակը . յոյսով մօր որ ընդունած էք մինչի ցարդ, որուն պատասխանին անհամբեր կսպասեմք. ողջ լինիք : Սրբիկ թէեւ գրած էի յունվար 11 թուականսու նամակին մէջ բոլոր գէպքերն գիւղին վրայօք. բայց ոչ երանի թէ միայն անոնք ըլլային, երանի թէ ամբողջ կան կարասիքն անտէրն ու անգամ : Մը եւս չգային այն անտառի գաղանները որոնց գէպքն մարդ

նուած խանութին . որ հիմա մումլաթի վաճառատուն է : Վահանի ընկերակցութեամբ մտան այդ վաճառատունը, ուրկէ անոր տակի մեծկակ նկուղը իջան, հոն ուշադիր կերպով զննեցին թէ, արդեօք կաքիլ՝ էր ասկէ պեղումներ կատարել գէպի թիւնէլ : Իրենց քննութենէն հասկցան որ թէեւ կարելի էր այդ նկուղէն գէպի թիւնէլ պեղումներ կատարել, սակայն նկատելով որ Ղալաթիոյ այն փողոցը շատ բանուկ է եւ մանաւանդ իրենց անմիջական կերպով հոն կատարուած պեղումներէն տեսնելով ժայռեր ու խոշոր քարեր կան նկուղին թիւնէլին կից պատին տակ : հրաժարեցան իրենց առջի որոշումէն, եւ բաւականացան նկուղին ալ կողմի անկիւնը հողին տակ հինգ հատ «պոմպա» թաղելով՝ դոր յաջողած էին իրենց հետ բերել վաճառատունը պըտըտելու եկած ատենին :

Նշանի այս յայտարարութեան վերայ անմիջական ձեռնարկներ եղան, առանց ժամանակ կորսնցնելու, այդ

ընդապատու կ'ըլլայ . ո՛հ որչափ կերպարանափոխ եղայ երբ գացի տե՛սայ հայ ամբոխին հետ այն վայրագութիւնները, որոնք գործած էին այն դազանները վերի գիւղի եւ մեր գիւղի ճակատէն մէջտեղը :

Այն տեսարանը, ո՛հ զարհուրելի էր, մի 35 ամեայ երիտասարդ եւ մի կին վերի գիւղէն եւ 20 տարեկան եւ 50 տարեկանի մօտ ծելունի մը մեր գիւղէն յոշոտուած էին այն անուշիկ լազ կոչուած գազաններէն. անոնց մարմիններն փռուած էին ցուրտ ձիւնի վրայ : Ասիկայ առաջին տնգամ կը տեսնայ վերի գիւղին փոշտածին երբ կանցնէր մեր գիւղէն վերի լիւղի եւ կուղայ յուր կուտայ մեր գիւղ : Գրեթէ ամբողջ գիւղացիք լիւղիցին յիշեալ տեղը եւ առնելով մեր գիւղի դիակները եւ նոյնպէս վերի գիւղացիք իրենցինը տարինք յանձնիրենք ծնողաց :

Վերի գիւղացի գոհներ եկած էին գիւղս պէզիրխանէն պէզըր շինելու համար եւ անոնց վերադարձին մեր գիւղէն 2 հոգի գործի պատճառաւ ընկերացած էին անոնց : Վերջապէս այսպէս ըսեմ որ մեր գիւղէն վերի գիւղ երթալու ապահովութիւն չկայ . ճամբաները յատուկ լազեր կսպասին հայերու համար կողոպտել . սպանել եւ յոշոտել, ինչու որ անանկ հրաման է տուեր լազերի գլխաւորը, կեանքերի գիւղերն մոխիր դառնել, ինչու որ մենք անոնց գլխաւոր թշնամին ենք եղեր . սրտի ցաւերնին յայտնի է, 120 ի չափ ընկերներուն բանտը նետուելուն պատճառաւ բայց ալ ճար չկայ, թէեւ 100 ի չափ զօրք խրկուեցաւ գիւղս, բայց անոնք ան ժամանակ չեն գար գիւղին վրայ յարձակելու, մէկ ալ որ զօրքերն շատ նեղութիւններ կուտան բնակչաց . հարսի, աղջկան. մի կին կամ աղջիկ գիւղին մօտ գուրս չկրնար ելլեր զօրքերու պատճառաւ :

Վերջապէս գիւղիս գիւղապետը Միւնաս թէ՛ իրենան որ սպանուեցաւ տնոր տեղը նշանակուեցաւ ինչպէս որ Պէզոսան այս զօրքերն ինչպէս որ Պէզոսանի նշանակուելուն ժամանակ եկան . ասոր պատճառն եղաւ յիշեալ գիւղապետը, թէեւ օգուտ ըրաւ մէկ կողմէն բայց մէկ կողմէն ալ գէշ եղաւ եւ մի շարք մնալուց յետոյ որոշեցինք զօրքն ալ գիւղէն գուրս հանել տալ : Սրբիկս, շատ տուներ

քանդել նիւթերը իրենց տեղէն հանելու համար : Նշանի առաջարկուեցաւ որ խնդարկութիւն կատարելու համար յիշեալ վաճառատան ներկուղը գացող պաշտօններուն ընկերանայ, որպէսզի գիւղացիք խոզարկութիւնները եւ ցոյց տալ «պոմպա» ներուն թաղուած տեղը :

Հարցաքննութիւնը ժամերէ ի վեր կը շարունակուէր. Նշան ինչորեք որ բնական պէտք մը գոհացնելու հրաման տուի իրեն, ինչ որ բնականաբար չի զլացուեցաւ ու իրեն վերայ հանելու պաշտօն ունեցող երկու օստիկան քօմիսէրներու հսկողութեան տակ ձեմիչ քնաց : Զեմիչի պատճառով անոր մարդու հասակէ բարձր ըլլալով անկարելի էր փախչիլ, եւ իրեն ընկերացող երկու քօմիսէրներուն ձեմիչին դրան առջեւ կանգնելն ալ բաւական նկատուած էր : Երբեքին վերայ հսկողութիւնը ապահովելու համար, եւ սակայն յիշեալ Նշան ձեմիչին մէջ մնացած կարճ ժամանակաւ միջոցին հոն գտնուած թիւթեղ ջուրի

կողոպտեցին այս օրեր . գիշեր ժամանակ շատ կովեր ոչխարներ եւ ջորիներ Բիւրսերն եւ Լաղերն իրարու միանալով եկան քիցին տարին. հայերէս ոչ ոք ձայն հանց, եթէ ոչ ամբողջ գիւղը մոխիր պիտի դառնար եւ հոյ ճարակ պիտի ըլլար :

Ամսոյս 15 ին նորէն քանի մը լազ հեթանոսներ գալով գիւղապետ ինչպէս որ պահանջեցին որ քաղաք դիմէ լազակի գայմազամբն եւ ոգատել տալ իրենց եղբայրներն : Դիւղապետը ունկնդրութիւն չընելուն պատճառաւ քիչ մնաց գնդակահար ըլլար, վերջապէս քիչ մը ծեծ ու տելէն յետոյ խեղճը խոստացաւ կամքերնին կատարել ո՛հ որչափ դժբաղդութիւն պիտի ունենայ այն խեղճը եթէ չը յաջողի կատարելու, ոչ թէ միայն, այլ բոլոր գիւղացիք : Վերջապէս գիւղս եւ վերի գիւղ շատ անապահով վիճակի մէջ ենք . վերի գիւղն ալ շատ սպանութիւններ եղան լազերու կողմէն, նոյնպէս Վանք, Հաղարք, Մարէք գիւղերն բոլորն ալ արիւնով ներկուեցան : Սյս գիւղէն միւսները մինչեւ իսկ այգիներն երթալու համարակութիւն չկայ, վերջապէս սրբիկ եղբայր իմ թէեւ շատ եւ շատ բաներ կան ճեռ, բայց մնացածը յաջողով կը գրեմ մտնրամասն : Կը խնդրեմ նամակդ անպակաս ընես : Մնամ ո եղբայրդ

ԱԶԳԱՅԻՆ

Ռուսուգէ, Պալլըգէ, Տօպրիչէ եւ Պուկարիոյ ուրիշ շատ մը հայաբնակ քաղաքներէ ստացուած նամակներէ կը տեղեկանանք թէ Վարդանանց տունին առթիւ ազգային գեղեցիկ հանդէսներ կատարուած են անցեալ հինգշաբթի օր : Մանաւանդ Պալլըգի փողքաթիւ հայ գաղութը, եկեղեցի եւ վարժարան չունենալուն հակառակ, մասնաւորի մը տանը մէջ հաւաքուելով, կոկիկ հանդէս մը կատարած է երգերով ու ճառախօսութիւններով եւ նոյն պահուն 60 ֆր. հանգանակած է տեղւոյն նորահաստաւ ընտելարանին համար :

«Եպրդ» անունով արտակարգ հապճեպով եւ առանց աղմուկ հանելու անոր ծարն ու կողերը սրբուցած ու հատու գործիքի մը վերածելով անով իր փորը ճեղքած եւ կոկորդին մէկ քանի մասերը վիրաւորած ու թեւերն կարմիր արիւն պարուեակող մեծ բազկերով մահացու կերպով պատառած է սղոցելու պէս : Դուրսէն յղացուած կասկածի մը վրայ անմիջապէս բացուած է զուռը ձեմիչին, ուր ի յայտ եկած են այս ամենը : Իսկոյն բազմաթիւ կարող բժիշկներ հրաւիրուած են յիշեալ դարմանալու համար, սակայն իր իսկ ձեռքով բացած վերքերուն հետեւանքով մեռած է :

Հաճի Նշանի վերոյիշեալ կերպով անձնասպանութեամբ մեռած ըլլալը հաստատուած էր գաղական պաշտօնաթուղթերուն մէջ գտնուած արձանագրութեան թուղթով եւ բժիշկներու տեղեկագրով : Զեմիչին այն թիւթեղեայ «Եպրդ» ը որ ծովափով հատու գործիքի վերածուած էր,

—Երէկ Պուկարիոյ Բ. Իշխանին ծննդեան տարեդարձը ըլլալուն առթիւ Վառնայի Թադ. Խորհուրդը շնորհաւորական հի առգիր մը ուղղեց Ն. Ա. Բարձրութեան :

—Մտրտիրոս իսակարեան անուն Սկիցի հոռմէական հայ մը արուեստով փորագրել ըլլալով, յաջողութեամբ կեղծած է երկաթուղիի արժեթուղթի մը 120 289 թիւը . որ 300,000 ֆր. չահած է եղեր վերջին վիճակահանութենէն մը գրամը գանձելու պահուն, Պուկարիոյ օսմ գրամատան հետ փոխանակուած հետագործ կեղծքը յայտնուելով կեղծարարը օձքը ձեռք կուտայ եւ կը գաղապարտուի 18 ամիս թիսպարտութեան :

—Կովկասէն ստացուած թերթերու վերջին թիւերը եւս կը հաստատեն թէ, մէկ քանի գաւառներու մէջ թուրքերը տակաւին կը շարունակեն իրենց յարձակումները հայ գիւղերու վրայ, բայց բոլոր գիւղացիներուն հանդիպելով ետ կը մղուին : Ուրիշ կողմերէլ հայտնութեան համար բանակցութիւններ կը կատարուին :

—Վեհ. Կաթողիկոսը կոնդակներ զրկած է Պուկարիոյ պատրիարքին եւ արտասահմանի առաջնորդներուն ու երեւելի ազգայիններու, յանձնարարելով որ Հոյ-թրքական ընդհարումներէն շնորհաւորութիւններ ընեն :

—Երեւանի Հին-Հնչակեան մասնաճիւղը հետեւելով Պագուի մասնաճիւղին, հրաժարած է Հնչակեան կուսակցութենէն ու գացած միացած է ուսս սօսիալիսթ կուսակցութեան հետ եւ իր այս լիբր որոշումը աներեսաբար աղղով մը ծանուցած է, որպէսզի ուրիշ մասնաճիւղեր ալ իրեն հետենին : Մեզ կը հաւաստեն թէ աղղային աղէտի պահուն այս ազգուրաց քայլին առաջնորդներէն մին է մեզ ծանօթ Հրահատ Կամսարը, նազարեկեանի ձագուկը :

ԼՈՒԾԻՆ ՏԱԿ

ՊՈՒԿԱՐ ՊԱՍՏԱՄԱԿԱՆ ԿԵՆՆԵՔ

Այս շատ գեղեցիկ հատոր մըն է թէ պարունակութեամբ եւ թէ կազմով . գինն է 5 ֆր. գիմը «Ձայն Հայրենեաց» խմբագրութեան :

Վերոյիշեալ բժիշկներու կողմէ քննուելով հաստատուած է որ անոր սուր կողերը յոր եւ նման են Նշանի իր անձին վրայ բացած վերքերուն ձեւին . ասկէ զատ «Եպրդին» սուր կողմերուն վրայ նշմարուած են ճարպի կտորներ եւ արեան ճապաղքներ որոնք բացարձակապէս եւ գիտակցութիւն կը հաստատեն թէ յիշեալ այս «Եպրդ» ը որ կողմերով ինքզինքը ոպանած է :

Իացայայտ է որ յիշեալ քօմիսէրն առջեւ իր ունեցած նախագահական զէրքին պատճառով ի գործ դրած է իր այս արհամարհելի արարքը ինչ որ անշուշտ արդիւնք է խոտվարաներու ծածուկ հրահանգին ու Այստե տմենայնիս յիշեալ իր եղեակագործ ընկերներու հանդէպ այս անձնութեան թեմար ապացուցած է իր անխիստական վատ գաղափարը, եւ տուած է անիծեալ եւ վայրագ օրինակ մը :

(Շարունակելի)

ՀԱՎԱՏՈՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Ժօրիսին Պէլճիգա հիւքիւմէ-
թիննէ թէսլիմի մէսէլէսի էլան
թիւրքիա վէ պէլճ տէվլէթի
պէյնինտէ տէվլամ իթմէքտէ օլ-
տըղը կիպի, Ունճեան Աբիկ է-
ֆէնտինին գաթիլի օլան վար-
դանեանըն տախի Ամերիկա հիւ-
քիւմէթիննէ թէսլիմի իտտաաւը
էլան սէմէրէսիզ գալմագտա
օլտըղընտան, Ամերիկա վէ Պէլճ
տէվլէթի միւթթէֆիգէն Պա-
պը Ալիտէն թապաալարընըն
սէրհալ թէսլիմիին նիւմայիշա-
թը պահրիյէ իլէ թալէպ իթ-
մէք վէ մէսէլէսին գաթիլէն հալ-
լի Լահէյտէքի սուլհիյէ հէյէթի
հաքէմիյէսիննէ իհալէ իթմէք
գարարընտա ըրըլար, Թրանսա-
տա տախի Ժօնիս մէսէլէսի իշին
«Լիպուը Էքսամէն» թարաֆընտան
պիր մէճլիս թէճէմիւ օլընուպ,
ֆրանսա գապինէսիննէ Պապը Ա-
լիյէ միւրաճաթիլէ Ժօնիսին
Պէլճիգայա թէսլիմիին վէ մէսէ-
լէսին Լահէյէ իհալէսին իտտաա
իշին վիւքէլա րէյիսի Մ. Բու-
վիէյէ պիր իսթիտա թագտիմ օ-
լընմըլ տըր :

— Բուս էլիսի եէնիտէն Պապը
Ալիյէ պիր նօթա վէրուպ, թագ-
մինաթը հարպիյէտէն միւթէ-
պագը 38000 լիւրանըն հէման
վէրիմէսիննէ թալէպ իտէյօր :

— Մաքէթոնիտաքի վալիլէ-
րին ալլըգլարընը գօնթօլ գօ-
միսիոնը աղաթմագ իսթէյօր :
Ֆագաթ Պապը Ալի մէքըլըր վա-
լիլէրին սատագաթ ու խըտմէ-
թինտէն նաշի մաաշլարընը ա-
գալմայթա րազի օլմայօր :

— Ալպանիտա թէքթար 3000
արնալուտար Միթրօլիցա գա-
զաւընտա իսթիլալ գալտըրմըլ
օլմալէ, լազըմ կէլէն թէտպիլ-
լէրի իթիթիաղ էթմէք իշին
Պապը Ալի Սքիւպ վալիլիիննէ թա-
լիմաթ վէրմիշ տիր :

— Թիւրքիանըն Արնալուտըլը
եախօտ «էսկի Սեպիա» գըթա-
սընտա չու սըրա սըրպ չէթալա-
րը բէք արթմըլ տըր : Սըրպլար
ըռմ վէ պուլկար քէօյլիլէրիննէ
թէհտիտաթիլէ սըրպ գալտ իթ-
տիրմէկէ չալըշիօրլար : Գու-
մանօլա թարաֆլարընտա շիմտի-
յէ գատար 42 քէօյ սըրպլարըն
թարաֆընա կէշմիշ տիր :

— Սթանպօլտան «էքօ տը Բարի»
կաղէթաւընա պիլտիլիլտիկի
իւզրէ, Եէմէնտէ թիւրք ասքէր-
լէրի Սանաա չէհրիննէ թէրք իթ-
միշ վէ Արապլարտան թաադիպ
օլընարագ Թալիլէյէ տօղրու չէ-
քիլմիշլէր :

Ալընան խապէրլէրէ կէօրէ սա-
նաա չէհրինտէ թիւրք ասքէր-
լէրի չօք թէլէթիաթ վէրմիշլէր
Ումրա մուհաթէ օլընմըլ : ձէ-

պէլ-էտտիրամ վէ սալիւր մէվ-
գըլար Արապլարտան գտպթ օլըն-
մըլ : Թալիլէ եագընլարընտա
մուհարէպէ տէվլամ իթմէքտէ ի-
միշ :

Կ Ի Ր Ի Տ

Կիրիտին համիսի օլան տէվ-
լէթլէրին մուրախասլարը ատա-
նըն բօլիթիքա, մալիյէ վէ իտա-
րէ մէսէլէրիննէ թէտգըգա պաշ-
լամըլ օլմալէ, մուխալիֆ ֆըր-
գանըն րէյիսիլէրի իլէ մուխապէ-
րէ իթմէքտէ տիրլէր : Պիւթիւն
թիւճարլար Կիրիտի Եոնանիս-
տան իլէ պիրլէշտիրմէք իշին
մահգէրլէր իմզալամագտա տըր-
լար : Ատանըն շարգ գըթաւըն-
տա չէթալար թէշքիլ իտէրէք,
իլք պահարտա հարէքէթէ պաշ-
լալաճագ տըրլար : Կիզլիտէն սի-
լահլար իտալ օլընիօր, պու-
սիպէպլէ գօնսօլուար գաշագ սի-
լահ կիրմէսիննէ էօնիւնիւ ալ-
մագ իշին կէշէն սէնէ կիպի
տէնիլքէ թէտպիլլէր իթիթիաղ
իտէյօրլար :

Տ Ա Ի Ի Լ Ի Է

Բուսլուգտա նէշր օլընան Թու-
նա կաղէթաւընըն պէյանը իւզ-
րէ, սօն թահրիլի նուֆուսա
կէօրէ, Բուսլուգ չէհրի էհալիսի-
նին մըգտարը 37000 քիշի գա-
տար ըմըլ : Եանի 5 սէնէ գար
ֆընտա 4000 քիշի արթմըլ :

— Հիւքիւմէթ սանտըղընտան
Պուլկարիա տախիլիննէ 70 քիլի-
սէլէրէ 50,000 ֆր. իանէ վէրիլ-
տիկի կիպի, նիքօր, Շուլա վէ
տիկէր պիր գաշ չէհրիննէ մամիլէր,
ինէլիքիշէր, իւզէր Եիւզ ֆր. իանէ
վէրիլմիշ տիր :

— Թուստա վաբօր իշլէտէն
Աւստրիա շիրքէթի Մարտ պի-
րինտէն իթիպարէն հաֆթատա
իւշ տէֆա վաբօրլար իշլէթմէկէ
պաշլալաճաղընը իլան իթմիշ
տիր :

— Պաղը կաղէթալարըն եագ-
տըլարը իւզրէ, պուլկար վա-
բօր գուճանեաթ ինկիլիկ ֆագ-
րիգալարընա իւշ ատէտ պէօյիկ
թիւճար վաբօրլարը սըբարիշ
վէրմիշ, իշպու վաբօրլար եա-
բըլագտան սօնրա Վտրիտտան
իսքէնտէրիէյէ գատար էհէմիլէթ
լի շարգ իսքէլէլէրիննէ իշլէյէ-
ճէքլէր տիր :

ԷՐՄԷՆԻՍՏԱՆ ՎԷ ՄԱԲԵԹՈՆԻԱ

ԻՁԻԻՆ ԳՕՆՁԷՐԱՆՍ

Պու կիւնլէրտէ Լօնտրաա
վէսթ-մինիսթր սէրալընտա Էր-
մէնի վէ Մաքէթոնիա մէսէլէլէ-
քիշիլին պիր գօնֆէրանս թէ-
ճէմիւ իտէյօր, իշպու գօնֆէ-
րանս Թրանսալը Էսթուրնէլ աը
Գօնսթանըն րէյասէթի ալթըն-

տա պէյնէլմիլէլ պիր գօնֆէրանս
օլուպ, Պէրլին անտնամէսիննէ
61 ինճի վէ 23 ինճի պէնտլէրին
անքեամընճա Էրմէնիստանտա վէ
Մաքէթոնիաա ճիտտի վէ թէ-
մէլլի իսլահաթ իճրասընը թա-
լէպ իթմէք մագսէտի իլէ թէ-
ճէմիւ օլընիօր :

Բ Ո Ւ Ս Ի Ա

Ս. Վիթէ վէ վիւքէլաաւան
պաղըլարը պէյնինտէ իսթիլաթը
էքքեար հասըլ օլտըղը իշին նա-
ղըրլարտան իւշ քիշի իսթիֆա
իթմիշ տիրլէր :

— Բուսիանըն հէր պիր գը-
թաւընտա ըսեան ու իսթիլալ
պաստըրըլմըլ օլմալէ, քէօյլիւ
լէր սիլահլարընը վէ թէշլիք-
ճիլէրի հիւքիւմէթէ թէսլիմ
իթմէքտէ վէ Չարա սատագաթը
թամմէ արզ էյլէմէքտէ տիրլէր :

— Կալկասիանըն պիր գաշ
գաղալարընտա գէրգէլէլէր վու-
գու պուլմուշ իսէտէ, խասարաթ
վէ թէլէթիաթ օլմամըլ տըր :

— Բուսիտան գաշան Եահու-
տիլէրի ինկիլթէրաաա գապուլ
վէ իսքեան իթիթիլմէք իշին,
ինկիլթէրաաաքի Սիօնիսթիլէր
հիւքիւմէթէ րէճա իտէճէքլէր :

ԱՃԷՄԻՍՏԱՆ ՎԷ ԹԻԻՐԲԻԱ

Իքի տէվլէթ պէյնինտէ սէպէ-
պի միւնիգաա օլան արաղիտէն
Թիւրքիա վաղ կէշմէլէլէ պէ-
րապէր, Եէմէն ըսեանը պաստը-
րըլտըրգճա Աճէմիտան իլէ
տախի տըլճման օլմագ թէհիլ
քէլի կէօրտիւկինտէն, չիմտիլք
միլալիմանէ տալրանմագ վէ
ասքէրլէրի կէրի չէքմէք իշին
Սթանպօլտան Ագըպէտէ պուլը-
նան ասքէր գօմանտանընա թա-
լիմաթ վէրիլմիշ տիր :

— Սթանպօլտա տէրտէսթ օլը-
նան Աճէմ թապաալը Շիրաղիննէ
մէսէլէսի էլան տէվլամ իտէյօր,
Աճէմ էլիսի Շիրաղիննէ քէնտի-
սիննէ թէսլիմիիննէ թալէպ իտէյօր,
Թիւրքլէր իսէ անա ճիւրմ աթֆ
իթմէք իշին տէլիլլէր արա-
մագտա օլուպ, թէսլիմ իթմէկէ
նիյէթիլ կէօրիւնմէյօրլար :

ՍԵՐՊԻԱ

Սըրպ հիւքիւմէթի Աւստրիա-
նըն թէհտիտաթընա տալանաւա-
յուպ, նիհայէթ կէօմրիկ մէսէ-
լէսիննէ Աւստրիա չուքգարիա հիւ-
քիւմէթիննէ րէյիննէ իհալէ իթ-
տի չէօյլէքի Սըրպ-Պուլկար
կէօմրիկ իթիթիլմէք իտէյօր
հէր հանկը պէնտլէրի վէ նօգ-
թալարը Աւստրիա պօզմագ իս-
թէր իսէ Սեպիա րազի օլաճա-
ղընը սօն պիր նօթա իլէ վաա
իթտի :

Չ Ի Ն

Չին հիւքիւմէթի հարպիյէ վէ
ասքէրիյէ իգթիզալարը իշին
տախիլի պիր իսթիգրաղ իթմէք
գարարընտա ըմըլ : Բուսլար Չի-
նին պու հաղըրլըլը քէնտիլէրի-
նէ գարըլ սիլահլանմագ մագ-
սէտիննէ համլ իտէյօրլար :

ԹԻԻՃՃԱՐԻՑԷ

ՎԱՌՆԱ, Փետր. 15.

ՉԱՆԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ			
Վալիս	54-60 լիպ.	9.80 / 11.20	
Արապա	52-62 լիպ.	9.60 / 11.60	
ԱՐՔԱ			
Վալիս 100 քիլո		11.70 / 12.05	
Արապա	42-47 լիպ.	6.50 / 7.40	
ԵՈՒԼԱՅ արապա	33/36 լիպ.	5.20/5.60	
Վալիս 100 քիլո		12.20/12.85	
ՅԱՍՈՒԼԵԱ արապա	100 քիլո	24-28	
ԲԱՐԻՑԱ	100	հօգ	
Արապա	100 քիլո	հօգ	
ՏԱՐԸ արապա		10/10.50	
ԲՕԼՕՁ արապա	55-60 լիպ.	11.12	
ՄԻՍԻՐ 57-58 լիպ.	առապա	8.60/8.70	
» 100 քիլո		31.60-11.80	
ՉԱՎՏԱՐ արապա		9.79.60	
» 100 քիլո		13. / 13.50	
Կիւնտէ 10-15 վալիս		վէ 5-6	
արապա կէլմէքտէ	վալիս մուսմէ-		
էսի նաթըլէօն 20 ֆր.	արապա մու-		
ամէլէսի նաթըլէօն	20. 20		

ՍԱՐԱՅԻՑԷ

նաթըլէօն 20, 20 ֆրանք
Օմ. իրաաը 22, 75 ալթուն ֆրանք

ՊԱԳԱԼԻՑԷ

Վարնա	բնացատընտա	պագալիլէ	
մալլէրին պու կէլէքի ֆիլաթը	ալթու		
ֆրանք իլէ :			
ԳԱՀՎԷ		2.20 / 2.30	
ՇԷԲԷՐ նէմցէ		70	
ՇԷԲԷՐ քէսմէ	սանտըր	37	
ԲԻՐԻՆՁ ձէնօլա չուվալը		42	
» Ֆիլիպէ		36	
» Ինկիլիկ »		30.	
Բիգոն »		49	
ԿԱՉ Սանտըր		12.90	
ՉԷՑԻՆ Եաղը քիլո		1.—1.10	
ԳՈՒՐՈՒ Իւզիւմ		25	
Եուսուրթա 100 ի		25. 20	

«ՉԱՅՆ» ՀԱՅՐԵՆԵԱՅ

Այս մեծածառայ շաշաթաթերը յե-
ղափոխական ջղուտ յագուածներ,
քննադատականներ եւ ազգային ու
քաղաքական լուրեր կը պարունակէ.
Արտասահմանի համար տարեկան
բաժնիքինն է 12 ֆր. կանխիկ .
Հասցէն է՝
Արմենիան Բիպլիլինկ քօ.
Բ. Օ. Պօքս 1731, Պօքսըն, Մաւս-
[Ալեքիկա]

Կարելի է բաժանորդագրուիլ նաեւ
Իրաւագրի խմբագրութեան միջոցաւ :

Одговорникъ А. Курбетянъ

ПОЧТЕНАТ А. Д. Телероев и С.но—Варна

